ՔԱՂՎԱԾՔ
Արձանագրություն թիվ 1

2014 թ. հունվարի 17-ին 14.00-ին տեղի ունեցավ Արտամետ համայնքի բնակիչների ընդհանուր ժողովը:

Ժողովին մասնակցում են ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի պետ՝Սանասար Բաղդասարյանը, գյուղում բնակվող 132 անդամներից 10-ը, ավագանու 4 անդամները, դպրոցի 3 մանկավարժ և գյուղապետարանի աշխատակիցները.

Ժողովի նաղագահ՝ Ա. Դավթյան
Քարտուղար՝ Գ. Գրիգորյան

ՕՐԱԿԱՐԳ

Արտամետ համայնքի ղեկավարի 2013թվականի ընթացքում կատարած աշխատանքային գործունեության հաշվետվությունը:
/զեկուցող Ա. Դավթյան/

Արտահայտվեցին՝ Մ. Ղազարյանը, Ռ. Քեփիկյանը,Գ.Գրիգորյան,Ա.Ամիրխանյանը

Զեկուցման մեջ և արտահայտվողների կողմից բարձրացվեցին համայնքին հուզող հետևյալ հարցերը.

1 Գազաֆիկացման կազմակերպում
Գազաֆիկացման աշխատանքները դադարեցվել են:Քրեական գործ է հարուցվել «ՏԵԴԱՍ» ՍՊԸ շինարարական կազմակերպության վրա: Քրեական գործը ընթացքի մեջ է:

2. Ապահովել սեփական եկամուտների մուտքերի կատարումը, հարցը քննարկել ավագնու արտահերթ նիստում և մշակել ծրագիր այն իրականացնելու համար:

Նախագահ՝ Ա. Դավթյան
Քարտուղար՝ Գ. Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան

Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2013թ. գործունեության վերաբերյալ

Հարգելի Արտամեցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն այսօր ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր գյուղապետարանի կողմից 2013 թվականին կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2013 թվականի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 9 նիստ,3-ը արտահերթ, որի արդյունքներով կայացվել է 20 որոշում, քննարկվել է ֆինանսական հարցեր:

Ֆինանսների բնագավառում.

2013 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2013 թվականի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ: 2013 թվականի դրությամբ պլանով սահմանված՝

Հողի հարկ՝ 9657.8 հ.դ --- 100%

Գույքահարկ՝ 312.5հ.դ --- 100 %

Հողի վարձակալություն՝ 402.8հ.դ. ---115 %

Գույքի վարձակալություն 1000000---

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր թողարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ հավաքագրվի և մուտքագրվի պլանով նախատեսված գումարը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

Ինչպես ձեզ հայտնի է 2005 թվականից պայմանագրային սկզբունքով «Տեղաս» ՍՊԸ պայմանավորվել էր համայնքում բնական գազի անցկացման աշխատանքներ իրականացնել, որի համար համայնքային բյուջեից 52.0 միլիոն հհ դրամ փոխանցվել է այդ նպատակի համար, բայց աշխատանքները չեն կատարվել:

Գազաֆիկացման աշխատանքները դադարեցվել են: Քրեական գործ է հարուցվել «ՏԵԴԱՍ» ՍՊԸ շինարարական կազմակերպության վրա: Քրեական գործը ընթացքի մեջ է:

:

Հողօգտագործման բնագավառ.

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվարկված է 775.15 հեկտար վարելահող, 624.05 հեկտար բազմամյա տնկարկներ:

Գյուղապետարանի կողմից 2013թ.-ի դրությամբ ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի ներկայացվել է վիճակագրական ծառայություն

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել

համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ:

Տրանսպորտի բնագավառ.

Համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներ ու շարժական մեխանիզմները օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու որոշմամբ, 1 տարի ժամկետով, վարձակալության պայմանագրով հանձնվել են «ՏԱԳԳԱՏԷ» և «ԳԱԳԳԱՏԷ» ՍՊԸ-ներին:

Աշխատանքի և սոց ծառայության բնագավառ.

Հիշատակված բնագավառում համայնքի ղեկավարը աջակցել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պայմաններ է ստեղծել համայնքի ազգաբնակչությանը աշխատանքի անցնել «ՏԱԳԳԱՏԷ» և «ԳԱԳԳԱՏԷ» ՍՊԸ-ներում, գյուղապետարանի աշխատակազմում և դպրոցում:

Հիմնախնդիրներ

2013թ.-ի երկրորդ կիսամյակի զեկույցի ժամանակ բնակիչները բարձրացրել են երկու հիմնախնդիրների հարցը.

1.Ներհամայնքային փողոցների կառուցում

2. Ճանապարհների լուսավորություն

Համայնքի ղեկավար՝ **Ա. Դավթյան**